10.57192/18291864-2024.1-3

ՀԱՅԵՐԻ ՎԱԽԵՐԸ ՉԱՓԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ*

Բանալի բառեր – ֆոբիաների պատմություն, հոգեպես ստրուկներ, լեռնականի ոգի, հերոս-զինվորներ, հերոս-գիտնականներ, հերոս-մենեջերներ:

Հայոց պետականության անկման և թյուրքական բարբարոս ցեղերի ներխուժման արդյունքում հին աշխարհի ամենախիզախ ժողովուրդներից մեկի՝ հայերի՝ խեղճ ու հարմարվող ազգի վերածվելու պատմական իրողությունը կրկին հիշեցնում է իր գոյության մասին՝ անկախ Հայաստանում արձանագրվող մեծ ու փոքր ֆոբիաների տեսքով:

Ու քանի որ դրանից օգտվող մեր արտաքին թշնամիները նորից են ուզում չափել հայերիս վախերը, նրանց հոգեբանական հնարքները բացահայտելու և չեզոքացնելու համար պարտավոր ենք թերթել մեր **ֆոբիաների պատմությունը**:

Ուշ Միջնադարում՝ Լենկ Թեմուրի ու շահ Աբասի դժնդակ ժամանակներում, մեր ժողովրդի զգալի մասը կամ սպանվել է կամ էլ հեռացվել է Արևելյան Հայաստանից, իսկ երկրում մնացածները «թուրքի ահից» պատսպարվել են անառիկ լեռներում: Իսկ Հայկական լեռնաշխարհի արևելյան լանջերին՝ Արցախում ու Սյունիքում առաջ են եկել նախնյաց մարտունակությունը պահպանած հայության որոշակի համախմբումներ: Ճիշտ նույն իրողությունը՝ լեռնական զեյթունցիների կամ՝ սասունցիների խիզախության ու արևմտահայության հիմնական զանգվածի խոնարհված վիճակի հակաթեզն արձանագրվել է նաև արևմտահայ իրականության մեջ: Արցախ-Սյունիքից կամ Տարոն—Սասունից ու մի քանի այլ լեռնագավառներից զատ՝ մեր ժողովրդի մեծամասնության ստրկացման ու ստորացման պատմությունը միայն նոր ժամանակների հայ ազատամարտն է ընդհատել: Նա է կերտել մարտնչող հայի այն տեսակը, որը Սարդարապատում կամ՝ Բաշ Ապարանում իր լեռնական ազգակիցներին զիջում էր սոսկ մարտական փորձով ու հմտություններով: Ուստի, երբ դրան գումարվեց Երկրորդ աշխարհամարտում ձեռք բերված մեծ փորձն ու մանավանդ՝ Արցախյան գոյամարտը, մեր սերնդին թվում էր, թե ընդմիշտ ջարդել ենք ազգի ստորացումների երկար շղթան:

* Ընդունվել է տպագրության 30.04.2024:

ՎԷՄ համահայկական հանդես, ԺՁ (ԽԲ) տարի, թիվ 1 (85), հունվար-մարտ, 2024

Այդ դեպքում ի՞նչ տեղի ունեցավ մեզ հետ վերջին տարիներին, երբ անգամ 44-օրյա դաժան պատերազմում հայ զինվորը հոգեբանորեն չէր կոտրվել, բայց ահա դրանից հետո՝ 2021-2023 թվականներին, մեր մարտական կորովն, իսկապես, նահանջ ապրեց: Մեր կարծիքով՝ դրա պատճառը «թուրքի ահը» չէր, այլ այն իրողության գիտակցումը, որ Հայաստանը, որպես պետություն, չունի սեփական անվտանգային համակարգը, իսկ այն, ինչը գոյություն ունի, գործում է միայն «դաշնակցի» համաձայնությամբ: Դա լուրջ ձեղքվածք առաջացրեց հայ զինվորականների գիտակցության մեջ, որոնց վերնախավն, առանձին բացառություններով հանդերձ, ընդունեց «դաշնակցի» ստորացուցիչ թելադրանքը: Սակայն նույնպիսին չէր հասարակ զինվորի վերաբերմունքը, որն արդեն 2022-ի սեպտեմբերյան լայնամասշտաբ հարձակման օրերին անօրինակ խիզախություն ցուցաբերեց՝ մարմինով փակելով թշնամու նորագույն զինատեսակների ճանապարհը:

Բայց այդ թվականներին Հայաստանի սուվերենության խարխլման գործիքների վերածված մեր քաղաքական ու զինվորական վերնախավերը «թուրքի ահի» նորանոր խմբաքանակներ ներարկեցին հայ հասարակությանը, ինչը նպատակ ուներ արդեն 2022-ին՝ ԽՍՀՄ-ի 100-ամյակի տարում, մեզ ներքաշել նոր միութենական պետության մեջ: Ու քանի որ Ուկրաինայի հերոսական դիմադրությունը կասեցրեց այդ գահավիժող ընթացքը, իսկ մեր «դաշնակիցը» շարունակում էր հոգեբանական պատերազմը՝ մեզ պարտադրելով ստորացուցիչ ընտրություն՝ Արցախի մնացորդացի ու «Զանգեզուրի միջանցքի» միջև, 2022-ի սեպտեմբերից հետո Հայաստանի իշխանական վերնախավը սկսեց փոխել իր «խաղադաշտը»: Պատճառն այն էր, որ հայ ժողովրդի հանդեպ Կրեմլի գործած մեծ ու փոքր մեղքերի **քավության նոխազը,** իր կամքից անկախ, հայտնվել էր վերջին, բայց ամենադառը՝ զանգեզուրյան բաժակն ըմպելու պարտադրանքի առջև:

Ուստի դրանից խուսափելու համար մնացել էր «թամադայի փոփոխության» սպառնալիքով սեղանը շրջելու տպավորություն ստեղծելը՝ ռուս-հայկական «ապահարզանի» նմանակումով զբաղեցնելով հայաստանյան հանդիսատեսին: Արտաքին արևելումների փոփոխության տպավորություն ստեղծող այս «համակարգային խեղկատակությունների» բոլոր մասնակիցներն իրականում զբաղվում են ազգը պառակտելու և ապակողմնորոշելու գործով: Մինչդեռ, Հայաստանը քարտեզից ջնջելու նպատակ ունեցող թուրքի համար նշանակություն չունի, թե ո՞ր երկրի դրածոյի դերն է խաղում այս կամ այն հայը: Ուստի, այս ձանձրալի դարձող թատ-

րոնի դերասաններով «զմայլվելու» փոխարեն՝ մենք պետք է գիտակցենք, որ նման բեմականացման սկզբնապատճառը ոչ թե թուրքն է, այլ դարեր շարունակ օտարին ծառայելու բացասական փորձ ձեռք բերած՝ **հոգեպես ստրուկ** հայը: **Ստրուկների հաջորդական սերունդներն իրենց դարավոր հնազանդությունը ժամանակի ընթացքում փոխակերպել են օտարամոլության, ինչը Հայաստանի վզից կախված ներկա կառավարելի քաղաքական համակարգի հիմքն է, որում ամենամեծ «պրեստիժը» ոչ թե իր հայրենիքին ծառայելն է, այլ որևէ տերության «մարդը» լինելը**: Ուստի մեր շուրջը ծավալվող աշխարհաքաղաքական դիմակայության համատեքստում տեղի է ունենում ոչ թե հայոց ավանդական ֆոբիաների հաղթահարումը, այլ **բազմազանեցումը:**

Մի կողմից՝ թուրք-ադրբեջանական տանդեմը՝ Սյունիքի ու Տավուշի ճանապարհների շրջափակման միջոցով փորձում է խաղարկել անկլավներով ու միջանցքներով մեզ ահաբեկելու և ապա՝ դազախական փափուկ ուժով հպատակեցնելու պանթյուրքական ծրագիրը:

Մյուս կողմից՝ մոսկովյան քաղաքականության հրեաթյուրքական ճարտարապետներն իրենց հին կայսերական ճոճանակի վրա են բարձրացնում հայերի վախերը չափելու գործընթացը, որում ՌԴ արտգործնախարարությունը զբաղվում է սպառնալիքներ կարդալու, իսկ նախագահի աշխատակազմը՝ Երևանին նոր երկխոսության հրավիրելու գործով:

Ուստի Ուկրաինայով տարված Ռուսաստանի ու ԱՄՆ-ի պայքարը Հայաստանի պարագայում սկսում է փոխել իր ուղղվածությունը. երկու կողմից էլ գրավիչ խոստումներ են տրվում մեզ՝ ատոմային զենքի կիրառումից մինչև ՆԱՏՕ-ի ամենազոր օդատիեզերական ուժերի օգտագործումը: Մինչդեռ այս «արջերի խրախճանքի» մյուս հանդիսատեսները՝ Հնդկաստանից մինչեւ Ֆրանսիա, մեզ հորդորում են դիմադրել՝ հենվելով ոչ թե «գլոբալ հնարավորությունների», այլ իրենց նման ռեալ ուժերի վրա:

Նման պայմաններում վրա է հասնում սեփական վախերը հակառակորդի վախերի հետ **համեմատելու պահը**, որովհետև Ադրբեջանում սկսել են լուսարձակվել 2020-ի պատերազմում թմրանյութերի միջոցով սեփական զինվորներին կատաղած ոչխարներ դարձրած զանգվածային հանցագործության հետևանքները: Պարզվում է՝ այս անգամ թմրանյութի չափաբաժինն այնքան մեծ է եղել, որ անցած մի քանի տարվա ընթացքում ադրբեջանական բանակում ու բանակից զորացրվածների շրջանում արձանագրվել են հարյուրավոր ինքնասպանություններ կամ՝ ինքնասպանության փորձեր: Դրանց առաջն առնելու և 44-օրյա պատերազմի վե-

տերաններին հոգեբանական օգնություն տրամադրելու համար 2023 թ. ապրիլի 1-ից Ադրբեջանում գործում են առողջապահության նախարարության հատուկ Call-կենտրոններ:

Ստացվում է, որ երբ մեր աչքերի առաջ կրկին վերակենդանացել են վախկոտի հանդեպ միշտ էլ խիզախ թուրք ցեղի ավազակային հակումները, մեզանում գլուխ է բարձրացրել հայոց ավանդական ֆոբիաները կրող ստրուկ տեսակը, որին ներկայացնող դերասանախմբերը զավթելով Հայաստանի քաղաքական դաշտը՝ զբաղվում են ազգի ապակողմնորոշման գործով: Նման պայմաններում դժվար է ասել, թե ով՝ ումից է ավելի շատ վախեցած. Ալիևը՝ հայերից, թե՞ հոգեպես ստրուկ հայերը՝ Ալիևից: Իրականությունն այն է, որ հակառակորդի շտապողականությունը վախի դրսևորում է, իսկ մեր կրավորականությունը՝ դարավոր ստրկության արտահայտություն:

Ավելին, կողմնորոշումային մտածելակերպ ունեցող մեր դերասանախմբերը իրենց հույսները դնելով օտար տերերի վրա՝ այդպես էլ չեն պատասխանում հիմնական հարցին: Առկա աշխարհակարգի անկառավարելի փլուզման պարագայում ունե՞նք արդյոք, մեր դրացի ցեղասպաններին դիմակայելու նվազագույն հնարավորություն: **Տեսականորեն՝** գլոբալ խաղում ճիշտ դիրքավորվելու ու տեխնոլոգիական հասարակության առավելություններն օգտագործելու դեպքում մեր նման փոքր ազգը կարող է հաղթել իրենից շատ ավելի հզորներին: Բայց **գործնականում** նման հնարավորության իրացման պարտադիր պայմանը՝ ինքնիշխան որոշումներ կայացնելու ունակությունը, մեզանում դեռևս բացակայում է:

Մեր սահմանների վերահսկողության միջազգային մեխանիզմների ձևավորման ու Հայոց բանակի վերազինման պարագայում Հայաստանն օժտվելու է ոչ միայն թմրանյութերի խումհարից այդպես էլ դուրս չեկող Ադրբեջանին ջախջախելու, այլև Թուրքիայից բխող վտանգները չեզոքացնելու կարողականությամբ: Դրա համար Հայաստանի քաղաքական ասպարեզից պետք է վռնդվեն վախենալ-չվախենալու երկընտրանքը տիրաժավորող ներքաղաքական կրկեսի բոլոր դերասանները: Նրանք դարեր շարունակ օտարներին ծառայած հոգեպես ստրուկ հայերի մնացորդացն են, ուստի որոշակի դերաբաշխումների միջոցով մեզ շեղում են Հայաստանի առջև բացվող հաղթանակի հնարավորության իրացման ճշմարիտ ուղուց:

Լուծումը՝ հաղթողա-պարտողական կեղծ դիսկուրսի միջոցով ազգն ապակողմնորոշող՝ քաղաքական դաշտ կոչվող **մեռած համա-**

կարգի խորտակումն է՝ լյուստրացիայի մասին օրենքի ընդունման, Ազգային ժողովի լուծարման, ազգ-բանակ հայեցակարգի որդեգրման և այլ հեղափոխական քայլերի միջոցով:

Միայն անկախականների կողմից ղեկավարվող ազգային հեղափոխությունը թույլ կտա հայությանը դեն նետել բոլոր վախերը և որպես ազատ մարդկանցից բաղկացած հասարակություն՝ իրացնել հաղթանակի ստույգ հնարավորությունը: Իսկ դրա համար հարկավոր է լեռնականի ոգին պահպանած հայոց մարտունակ տեսակի նորացումը, որն անցյալում իր ուսերին է կրել հաջորդական ազատամարտերի բեռը, իսկ այսօր կարող է դառնալ ինքնիշխան որոշումների կայացման քաղաքական հենարանը:

Ներկայումս մեր ոխերիմ հարևաններն իրենք են խոստովանում, որ Հարավային Կովկասի «թույլ օղակի» վերածված Հայաստանն իր ինքնիշխանությունը պահպանելու պարագայում կարող է դառնալ գլոբալ խաղի տարածաշրջանային հաղթաթուղթը: Քանզի մինչ իրենք նավարկում են համաշխարհային պատմության օբյեկտիվ ընթացքին հակառակ ուղղությամբ՝ Հայաստանը դրսևորում է տեխնոլոգիական հասարակության վերածվելու ներուժ-կարողականություն:

Ուրեմն՝ նորացման միջոցով հզորացող ազգի գիտատեխնոլոգիական կարողականության բազմապատկումն է ներկա դարաշրջանի հայ ազատամարտը՝ հերոս-զինվորների կողքին կանգնող իր հերոս-գիտնականներով ու նրանց մտքի թռիչքն իրացնող հերոս-մենեջերներով, որոնք անպայման բացելու են հայոց հաղթանակների դուռը:

Խմբ.

TIME TO MEASURE THE FEARS OF ARMENIANS

Key words - history of phobias, slaves by soul, highlander's soul, hero-soldiers, hero-scientists, hero-managers.

Edit.

ВРЕМЯ ИЗМЕРИТЬ СТРАХИ АРМЯН

Ключевые слова - история фобий, рабы по психике, дух горца, герои-солдаты, герои-ученые, герои-менеджеры.

Ред.